

Ժողովուրդ

151
(2631)

25 հոկտեմբերի երեքշաբթի 2022
տպագրության ժԱ տարի

✉ ք. Երևան, Արմավյան 22ա/3 (0010)

☎ + 374 10 546423

@ info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

100 դրամ

ՆԻԿՈՒՄ ՓԱՇԻՆՅԱՆԸ ԽԱԲԵԼ Է ՄԱՍ 119




2020 թվականին տեղի ունեցած 44-օրյա պատերազմից հետո ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը գրառում էր արել. «Ռոբերտ Քոչարյանը Արցախի նախկին նախագահներին խնդրել է, որ Նիկոլ Փաշինյանին խնդրեն, որ Պուտինը հանդիպի Քոչարյանի հետ»: Այդ սուտը, սակայն, հերքեց հենց ռուսական կողմը, ընդ որում դա արեց բավականին կրեատիվ ձեռով. չեղարկվեց Փաշինյանի ՌԴ կայանալիք այցը, ինչով հստակ մեսսիջ հղվեց, որ Փաշինյանն ի գորու չէ խնդրել անգամ ինքն իր համար: 13 ամիս Նիկոլ Փաշինյանն ու Վլադիմիր Պուտինը չէին հանդիպել, սակայն ուշագրավ է, որ երբ 2019 թվականին ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինն այցելել էր Երևան, իր աշխատանքային այցի շրջանակում հոկտեմբերի 1-ին այցելել էր Ռուսաստանի դեսպանատուն, որտեղ հանդիպել էր Հայաստանի նախկին նախագահի տիկին Բելլա Քոչարյանի հետ: 44-օրյա պատերազմից հետո բազմաթիվ են եղել դեպքերը, երբ Փաշինյանի հայտարարությունները ռուսական կողմը հերքել է: 2020 թվականի դեկտեմբերի 16-ին Փաշինյանը հայտնեց հերթական ստի մասին՝ հայտարարելով, որ, իր ունեցած տեղեկություններով Շուշիի հատվածում շրջափակման մեջ են հայտնվել նաև ռուս խաղաղապահները: ՌԴ ՊՆ-ն անմիջապես հերքեց Փաշինյանի ունեցած տեղեկությունները՝ հերթական անգամ ՀՀ վարչապետին դնելով անհարմար դրության մեջ: ՀՀ-ՌԴ այս հերքումները եւ հայտարարությունները եւս մեկ անգամ ապացուցում են, որ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը կրկին խաբել է ՀՀ հպարտ եւ արժանապատիվ քաղաքացիներին:

Քաղաքական իշխանությունը նախքան Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նոր կազմի ձեւավորումը փոփոխել է «Ընտրական օրենսգիրք»-ը ու պարզեցրել ԿԸՀ անդամության պահանջները: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով իշխող «Քաղաքացիական պայմանագիր» այս քայլը, որ իրագործվել է ԶԳ-ական պատգամավոր Հերիքնազ Տիգրանյանի ու Արթուր Հովհաննիսյանի ձեռամբ՝ ԸՕ սահմանդրական օրենքում լրացումներ ու փոփոխություններ անելու նախագծի փաթեթով, ԿԸՀ նորընտիր անդամներին ապահովագրելու համար է արվել: Օրինակ՝ եթե նախկինում ԿԸՀ անդամության համար իրավաբանական կրթություն ունենալը պարտադիր էր, ապա այժմ բավարար է միայն պատգամավորի համար նախատեսված չափանիշներին բավարարելը: Եթե օրենքը չփոփոխվեր, ապա, օրինակ, ԿԸՀ անդամներ Աննա Գրիգորյանն ու Արուսյակ Տերչանյանը ԿԸՀ անդամ դառնալ չէին կարող. իրավաբանական կրթություն չունեն, համեմալորդեսա նրանց կենսագրական տվյալների մեջ այդ մասին ոչինչ գրված չէ, իսկ ԿԸՀ նախագահ Վահագն Հովակիմյանն էլ միայն 2021-ին է կարողացել մի կերպ վաղուց կյանքը դադարած Մովսես Խորենացու անվան համալսարանից դիպլոմ ստանալ՝ իրավաբանի որակավորմամբ: Նոր փոփոխությամբ պահպանվել են միայն «հրապարակային քաղաքական գործունեությամբ չի զբաղվել» ու «բարձրագույն կրթություն» ունենալու դրույթները: Եվ եթե անգամ վերոնշյալ մնացյալ բոլոր դրույթները մի կողմ դնենք, ապա միան «հրապարակային քաղաքական գործունեություն չձավալելու» ամրագրումը բավարար է արձանագրելու համար, որ ԿԸՀ նախագահ Վահագն Հովակիմյանն այդ պաշտոնին է գնացել ուղիղ ԱԺ-ից՝ երկրի թիվ մեկ քաղաքական հարթակից: Ինչ է ստացվում. իշխանավորներն անգամ ԸՕ-ի փոփոխությունները չեն կարողացել գրագետ ու անխոցելի կերպով իրենց հարմարեցնել:



«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ չի բացառվում, որ ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի ավտոշարայան մասնակցությամբ տեղի ունեցած վթարի հետեւանքով մահացած հղի կնոջ՝ Սոնա Մնացականյանի դեպքով նոր քրեական վարույթ նախաձեռնվի, որը կապված լինի անհետացած ձայնագրությունների հետ: Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ անհետացած ձայնագրությունների մասով Գլխավոր դատախազություն բողոք է ներկայացվել, իսկ թե ներկայացված բողոքը կբավարարի, եւ նոր քրեական վարույթ կնախաձեռնվի, թե կմերժվի, կիմանանք՝ հետեւելով զարգացումներին: Ավելի վաղ հայտնել էիք, որ ՊՊԾ եւ ԾՈ ուղեկցող բոլոր մեքենաների մեջ ռադիոկապ է եղել, սակայն խոսակցությունը չի ձայնագրվել եւ չի արձանագրվել: Տուժողի իրավահաջորդի ներկայացուցիչ, փաստաբան Ռաֆֆի Ալլանյանը նշել էր. «Վարույթի նյութերով հիմնավորվել է, որ շարայան ավտոմեքենաների մեջ գործել է ռադիոկապ, սակայն ռադիոկապի ձայնագրություն տեղի չի ունեցել տեխնիկական խտանի պատճառով, մինչդեռ կառավարության որոշումը սահմանում է, որ ռադիոկապը, ձայնագրվելուց բացի, նաեւ պետք է արձանագրվեր ԾՈ հերթապահ մասում: Տուժող կողմի մոտ հիմնավոր կասկած կա, որ ռադիոկապի ձայնագրությունները չորամադրելու հանգամանքը քրեական վարույթի օբյեկտիվ ընթացքը կանխելու նպատակ է հետապնդել»: Ձայնագրության միջոցով պարզ կլիներ՝ ինչ է հանձնարարել Նիկոլ Փաշինյանը, արդյոք մեքենան կանգնեցնելու կամ չկանգնեցնելու հրաման տվել է, եւ, առհասարակ, ինչ են խոսել: Հավելենք, որ Նիկոլ Փաշինյանի ավտոշարայան կողմից հղի կնոջ՝ Սոնա Մնացականյանի՝ մահվան ելքով վրաերթի ենթարկվելու վերաբերյալ գործը դատարանում է, մակագրվել է Երեւանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Կարեն Ֆարխոյանին:



«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ ՀՀ քննչական կոմիտեի նախկին նախագահ Հայկ Գրիգորյանը ՀՀ գլխավոր դատախազությունից հեռ է վերցրել իր՝ ՀՀ գլխավոր զինդատախազ դառնալու դիմումը. թեկնածուն միայն նա էր: «Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ նա քաղաքական իշխանություններից նոր առաջարկ է ստացել եւ որոշել է գնալ Բարձրագույն դատական խորհուրդ, դառնալ ԲԴԽ անդամ: Ի դեպ, «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ներսում բոլորը կողմ են եղել Հայկ Գրիգորյանի՝ ԲԴԽ անդամ դառնալու տարբերակին: Իսկ ո՞վ է լինելու զինդատախազ: Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ նորանշանակ գլխավոր դատախազը զինդատախազ կնշանակի համակարգի ներսից, իսկ թե ով կլինի նա, առայժմ ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանը վերջնական որոշում չունի: Հիշեցնենք, որ զինդատախազի պաշտոնի համար նշանակված մրցույթը պետք է կայանար հոկտեմբերի 21-ին, սակայն Հայկ Գրիգորյանի քայլից հետո մրցույթը չի կայացել, եւ պատերազմի մեջ գտնվող մեր երկիրը մեկ ամսից ավելի է, ինչ զինդատախազ չունի:



ԱՐԳԵԼԱՓՈՒՄՆԵՐ

ԱԶԳԱՅԻՆ ՀԵՐՈՄՆԵՐԸ ԹԻՐԱԽՈՒՄ

Հայաստանի Ազգային հերոս Մոնթե Մեյնոյանի մասին սարսափալից հրատարակումներն ու նրա լուսանկարները բարոնակում են դուր չգալ «Մեսա» ընկերությանը: Նրա կողմից գործարկվող Facebook սոցիալական ցանցն արգելափակում է Հայաստանի Ազգային հերոսի մասին գրառումներ անող օգտատերերի ինչ-ինչ գործողությունները: «Հենակես» վերլուծական կենտրոնի ղեկավար Վիսալի Մանգասարյանը նույնպես առնչվել է Facebook-ում արգելափակվելու խնդրին, բայց նա նույնիսկ ոչ թե Մոնթեի, այլ վերջինիս գոհվելու վայրում ընկերների հետ դեռևս 2017-ին արված ու հրատարակված լուսանկարներ վերահրատարակել:



«Ես անգամ Մոնթե Մեյնոյանի լուսանկարը չէի հրապարակել, իմ ընկերների հետ կանգնել էինք նրա գոհվելու տեղում ու նկարվել: Դեռ այդ արդեն հրապարակված լուսանկարն էի հրապարակել,- Նշում է Մանգասարյանը:

Հրապարակումներ անելու երեսուկամյա արգելափակումը հետո մեր գրուցակիցն այժմ գրառումներ անելիս, միանշանակ գոյշանում է, բայց եւ գարմանում է՝ վերոնշյալ լուսանկարը 2017-ին նույնպես հրապարակել էր Facebook-ում, այն ժամանակ, սակայն, դա «Մետա» ընկերությանը չէր վիրավորվել: «2017 թվականին, երբ ես հրապարակել էի լուսանկարը, այն ժամանակ էլ դա բավական դիտում էր հավաքել ու մեծ արձագանքների արժանացել Facebook սոցիալական ցանցում, բայց ոչ մի արգելափակումներ տեղի չէին ունեցել»,- ասում է ռազմական փորձագետը:

Մեր գրուցակիցի համոզմամբ՝ սա հստակ արդրեջանական ձեռագիր է, որ թե՛ քաղաքական, թե՛ իրավական առումով համոզել է «Մետային», թե՛ Մոնթե Մեյնոյանի մասին ցանկացած գրառում դեմ է ընկերության որդեգրած քաղաքականությանն ու Նորմերին: «Իմ կարծիքով՝ արդրեջանների մատը խառն է այս ամոքքը պատմության մեջ, ու մենք պետք է հասկանանք՝ ինչ գործողություններ ենք անելու դրան հակադրելու համար: Մենք էլ մեր հերթին հիմնավոր փաստարկներով պետք է կարողանանք Facebook-ին ապացուցել, համոզել, որ վերանայի իր որոշումը»,- տեսակետ է հայտնում Վիտալի Մանգասարյանը:

Խնդրի մասով Հայաստանի արտաքին գործերի նախարարությունը տեղյակ է, ավելին՝ որոշակի քայլեր ձեռնարկել է: ԱԳՆ աշխատակիցները «Մետա» ընկերության ներկայացուցիչների հետ քննարկումներ ունեցել են, ինչի ժամանակ վերջիններիս փոխանցել են՝ ինչպիսիք ոչ թե Մոնթե Մեյնոյանի մասին գրառում անելը կամ լուսանկար հրապարակելն է, այլ այն, որ ՀՀ ազգային հերոսը Հայաստանի ազատագրության հայ զաղուսի բանակի՝ «ԱՍՍԼԱ»-ի հետ է առցանցվում:

Խնդիրը նույնպես է բացատրում Նաե տեղեկատվական անվտանգության փորձագետ Սամվել Մարտիրոսյանը: Նրա կարծիքով՝ ինչպիսիք ոչ թե առհասարակ Հայաստանի ազգային հերոսների կամ արդրեջանական ձեռագրի, այլ կոնկրետ «ԱՍՍԼԱ»-ի հետ է կապված:

«ԱՄՆ Պետդեպը դեռ շատ տարիներ առաջ «ԱՍՍԼԱ»-ն պաշտոնապես որպես ահաբեկչական կազմակերպություն է ճանաչել: Եվ քանի որ Մոնթե Մեյնոյանը ժամանակին եղել է «ԱՍՍԼԱ»-ի լիդերներից մեկը, ապա այժմ «Մետա» ընկերությունը, հետեւելով ԱՄՆ օրենսդրությանն ու կարգավորումներին, ավտոմատ կերպով արգելափակում է «ԱՍՍԼԱ»-ի հետ

առնչվող եւ ամեն ինչ»,- մանրամասնում է փորձագետը:

Ընկերության ներկայացուցիչներին, ասում է փորձագետը, մեր ազգային, հայրենասիրական զգացմունքները չեն հետաքրքրում, ու դա է պատճառը, որ երբեմն անգամ Մոնթեի անունը գրելն է որոշակի գործառնությունների արգելափակման հանգեցնում:

«Շատերին թվում է, թե աղբրեջանցիները Նստած որսում են՝ ՀՀ ազգային հերոսների մասին ով ինչ գրեց, ու, ըստ այդմ, Facebook-ին բողոք են ներկայացնում, կամ անգամ մեր հայրենակիցները, քաղաքական տարբեր հայացքներից ելնելով, իրար են մեղադրում, թե այսինչը բողոքեց, ինձ արգելափակվեցին, այսինչ՝ պարզ մեխանիզմ է գործում, այսպես ասած՝ ռոբոտ, որ ավտոմատ կերպով անցնում է լուրերի, արխիվների վրայով ու իր համար խախտում հայտնաբերելու դեպքում արգելափակում է»,- նշում է մեր գրուցակիցը:

ԱԳՆ-ի կողմից «Մետա»-ի հետ տարվող բանակցությունների մասին Մարտիրոսյանը տեղյակ է, բայց բարդ է ասել, գուցե եւ անհույս, թե մեր պատկերացումները ներկայացնելուց հետո ընկերության ներկայացուցիչներն ինչ որոշում կկայացնեն: **ՄԵՎԼԱ ՎԱՐՈՒՄՅԱՆ**

ՆԱՏԱՇՐՋԱՆԸ ՄԵԿՆԱՐԿԵԼ Է

Այսօր մեկնարկելու է Աժ հերթական Նստաշրջանը, որի օրակարգը հաստատվելու էր երեկ՝ Աժ խորհրդի նիստի ժամանակ:

ArmLur.am-ը տեղեկացավ, որ օրակարգում ընդգրկված է ընդամենը 9 հարց, ինչը ենթադրում է, որ այն կարճատև է լինելու, եւ իշխանական խմբակցությունը առանց ընդդիմադիրների արագ կապառի օրակարգը:

Արդեն Նստաշրջանի երկրորդ օրը՝ չորեքշաբթի, խորհրդարան կզան կառավարության անդամները՝ վարչապետ Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ, եւ կպատասխանեն պատգամավորների հարցերին:

ԲՅՈՒՋԵՐ ԸՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

Հոկտեմբերի 31-ից խորհրդարանում մեկնարկելու են 2023 թվականի «Պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի նախնական քննարկումները: Ժամկետացանկն արդեն հաստատվել է:

ArmLur.am-ը տեղեկացավ, որ հենց առաջին օրը քննարկումներին հրավիրված է Նաե ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը: Այդ օրը նախատեսվում է Նաե ոստիկանապետի, պաշտպանության նախարարի, ԱԱԾ տնօրենի այցը խորհրդարան: Նրանք կներկայացնեն բյուջեի նախագիծը եւ կպատասխանեն լրագրողների հարցերին:

Նկատենք, որ բյուջեից ծախսվող գումարների ամենամեծ աճը կլինի հենց ռազմական պաշտպանության գծով: Խոշոր ուղղություններից են Նաե կենսաթոշակներն ու պետական պարտքի տոկոսավճարները: Ըստ նախագծի՝ սպասվում է, որ 2023 թվականի պետական բյուջեն ունենալու է 2 տրլն 301.3 մլրդ դրամի եկամուտ, սակայն ծախսվելու է ավելի 2ատ՝ 2 տրլն 590.1 մլրդ դրամ:

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱԳԻԾ

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը քրեական օրենսգրքի 421 հոդվածում (Տարածքային ամբողջականությունը խախտելու ուղղված գործողությունները) փոփոխությունների նախագիծ է ներկայացրել: Այն հրապարակվել է e-draft.am-ում:

«Ինքնիշխանությունից հրաժարվելու՝ բռնություն գործադրելու կամ բռնություն գործադրելու սպառնալիքի միջոցով հոգուտ այլ պետության կամ միջազգային կամ վերապետական հանրային կազմակերպության Հայաստանի Հանրապետության ինքնիշխանությունը լրիվ կամ մասնակի սահմանափակելու ուղղված գործողություններ կատարելը՝ պատժվում է ազատազրկմամբ՝ 12-ից 15 տարի ժամկետով»:

Նախագիծը կքննարկվի մինչեւ նոյեմբերի 6-ը:

ԿՐՅ ՆԱԽԱԳԻՐ

ԲՈՒՂՈՒՄ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԿՅԱՆՔԸ ԴԱԴԱՐԵԼ Է

Կենսոնական ընտանիքի հանձնաժողովի նորընթաց նախագահ Վահագն Հովակիմյանի ձեռք բերած իրավաբանական կրթության օրոք խոսակցությունները չեն դադարում: Տեղեկացնենք «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ Կենսոնական ընտանիքի հանձնաժողովի նորընթաց նախագահ Վահագն Հովակիմյանի՝ որդես ութերորդ գումարման խորհրդարանի դասգամավորի ներկայացրած կենսագրության մեջ, որը հրատարակված է Ազգային ժողովի դասընթացական կայքում, նշված է, թե նա 1996-2000թթ. ավարտել է ԵՊՀ փիլիսոփայության, հոգեբանության, ֆառագիտության ֆակուլտետը, մինչդեռ վարձավճար չունեցող դասընթացում նա դուրս է մնացել համալսարանից:

տը եւ ունի իրավաբանի որակավորում, սակայն բացակայում է տեղեկությունը, թե որ թվականին է բուհ ընդունվել: Իրականում եղել է ձեռնարկ մի գործընթաց իրավաբանի դիպլոմ ունենալու համար:

Նկատենք, որ ԶԳ-ական սահմանադրագետն իրավական կրթություն ստացել է այնպիսի մի համալսարանում, որտեղ ուսումնական կյանքը, ըստ համալսարանի պաշտոնական կայքի, 2014-2015 թվականներից հետո կանգ է առել: Օրինակ, համալսարանի պաշտոնական կայքի տվյալներով՝ ընդունելության վերջին քննությունները տեղի են ունեցել 2014-2015 թվականներին: Ավելին, գիտական խորհրդի վերջին նիստը տեղի է ունեցել 2015 թվականին, համեմատելուց, կայքի տվյալներով, գիտական խորհրդի նիստի արձանագրությունը հրապարակվել է 2015 թվականի սեպտեմբերի 11-ին:

Ի դեպ, Երեւանի Մովսես Խորենացու անվան համալսարանի ռեկտոր Արթուր Աղաբաբյանը «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում հայտարարել է, որ Հովա-

կիմյանը 2017-2018 ուսումնական տարին է ընդունվել: Եթե պատգամավորը ավարտել է հեռակա բաժինը, ապա պետք է 5 տարի սովորած լինել, հետեւաբար պետք է ընդունված լինել մասնավոր այդ համալսարանը 2016 թվականին: 2014-2016 թվականներին Հովակիմյանն աշխատել է «Ժողովուրդ» օրաթերթում որպես փոխնախագահ, եւ մենք՝ որպես գործընկերներ, որտե՛ք բան չենք իմացել նրա՝ որտե՛ք համալսարանում ուսանելու մասին. Նա երբեք դասի չի գնացել, ստուգաբան, քննության չի մասնակցել:

Սա ինքնին ենթադրում է, որ նա 2018 թվականին, երբ խորհրդարանական արտահերթ ընտրություններից հետո ընտրվել էր պատգամավոր, արդեն սովորում էր վերոնշյալ համալսարանում: Նախկինում նրա ներկայացրած կենսագրության մեջ բացակայում է ուսանող լինելու մասին որե՛ւ տեղեկություն. այդ կենսագրության մեջ միայն նշված են տեղեկությունները նախորդ կրթության մասին:

ՍՅՈՒՆ ԶՍԱՐԱՐՉՈՒՄՅԱՆ

ԻՐԱՎԻՃԱԿ

ՀԱՄԱՐՇԵՔ

ՀԱՄԱՐՇԵՔ ԵՎՐՈՅԻՆ

Հայաստանում կարտոֆիլի գինը կամաց-կամաց հավասարվում է եվրոյի փոխարժեքին: Այն, նախորդ տարվա այս ժամանակահատվածի հետ համեմատ, ավելի բարձր գնով է վաճառվում: Նշենք, որ կարտոֆիլի մեկ կիլոգրամն այս օրերին վաճառվում է 320-350 դրամով: Իսկ եվրոյի փոխարժեքը կազմում է 390-400 դրամ:

«Ագրագյուղացիական միավորում» ՀԿ-ի ղեկավար Հրաչյա Բերբերյանը, ArmLur.am-ի հետ զրույցում անդրադառնալով կարտոֆիլի բարձր գնին, ասաց, որ առաջիկայում այն ավելի է թանկանալու:

«Որ ժամանակին պարարտանյութն էժան գնով ներկրեինք, կուտակեինք, եւ կառավարությունը պատահական մարդկանց այդ բիզնեսի մեջ չխցկեր, ամեն ինչ կարգին կլիներ: Մեկ պարկ պարարտանյութի գինը դարձավ 21-22 հազար դրամ, հետո դիզվառելիքը, թունաքիմիկատները, սերմացուն թանկացան: Այսօր կարտոֆիլի մեծածախ գինն արդեն հասել է 200 դրամի՝ նախորդ տարվա 120 դրամի փոխարեն: Առանց պարարտանյութի, թունաքիմիկատների, դիզվառելիքի գյուղացին չի կարող մշակություն անել: Բուլղարիայի օրինակը բերեմ, որտեղ այսօր մեկ կիլոգրամ շատ ցածր որակի պարարտանյութն արժե 4 եվրո: Ռուսաստանում բարվոք չէ կարտոֆիլի բերքի վիճակը. չնայած որ մեզ մոտ կարտոֆիլի համար հաջող տարի չէ, բայց մենք ինքնաբավ ենք: Ինչպես կարող էր դիզվառելիքի մեկ լիտրը նախորդ տարի 300-350 դրամով վաճառվել, հիմա՝ 600-700 դրամով»,- նկատեց Բերբերյանը:

Մասնագետի խոսքով՝ կարտոֆիլի գինը մինչեւ տարեվերջ կհասնի 600 դրամի, եւ այդ գինը կպահպանվի մինչեւ հաջորդ բերքը: Մեր գրուցակիցը նշեց նաեւ, որ կարտոֆիլի սերմացուի համար նախկինում մաքսատուրք չէր կիրառվում, իսկ հիմա այն կազմում է 5 տոկոս:

ՄԱՐԱՑՈՒԹՅՈՒՆԸ ՆՎԱԶԵԼ Է

Հայաստանում սրտանոթային հիվանդություններից մահացել է 10 հազար 106 մարդ: ArmLur.am-ը ՀՀ վիճակագրական կոմիտեից տեղեկացավ, որ այս տարվա հունվար-օգոստոս ամիսներին մահացածների քանակը նվազել է՝ կազմելով 18 հազար 554, իսկ նախորդ տարվա այս ժամանակահատվածում մահացածների թիվը կազմել է 20 հազար 841. մահվան ցուցանիշը մեկ տարվա ընթացքում 11 տոկոսով նվազել է: Միայն Covid-19-ից նախորդ տարի մահացել է 2477, այս տարի՝ 726 մարդ:

ArmLur.am-ը տեղեկացավ, որ Հայաստանում ամենից շատ մահանում են ոչ միայն սրտանոթային, այլեւ օնկոլոգիական հիվանդություններից: Ավելին, հիվանդությունների «սեւ ցուցակ»-ի երկրորդ տեղում օնկոլոգիական հիվանդություններն են, որոնց մեջ գերակշռում են չարորակները: Հայաստանում նորագոյացություններից այս տարվա հունվար-օգոստոս ամիսներին մահացել է 3457 մարդ:

«ՓԱՇԻՆՅԱՆԸ ՂԱՐԱԲԱՂԸ ՀԱՆՁՆՈՒՄ Է»

«Վաճինգտոնը, երեսուցի, Երեսուցի համոզել է Մոսկվայի քիկունգի հետևում ստորագրել կադիստրալայի դաշնամագիդը», - КОМСОМОЛЬСКАЯ ПРАВДА թերթի «Փաշինյանը Ղարաբաղը հանձնում է, որդեգիր Հայաստանը դեղի Արեւմուտք սանի» հոդվածն այս նախաբանով է սկսում:

Հոդվածագիրը գրում է, որ Ռուսաստան-Ուկրաինա հակամարտության հենց սկզբից էլ հասկանալի էր, որ Վաշինգտոնն ու Բրյուսելը կփորձեն օգտագործել պահն ու նախկին ԽՍՀՄ ամբողջ տարածքում Մոսկվայի համար խնդիրներ ստեղծել:

«Այս համատեքստում «ամենահարմարը» Ղարաբաղյան հարցն է: 2020-ի 44-օրյա պատերազմից (այն կանգնեցվել է բացառապես ռուսական կողմի ջանքերի շնորհիվ) եւ Ղարաբաղում ռուսական խաղաղապահ զորքերի տեղակայումից հետո թեւեւ փխրուն, բայց խաղաղություն հաստատվեց: Ադրբեյջանի եւ Հայաստանի սահմանին տեղի ունեցող տարբեր մասշտաբների փոխհրաձգություններն ու միջադեպերը ակնհայտորեն քաղաքական ճնշման հետեւանք են, որ բանակցություններում արդյունքի հասնելու տրամաբանության մեջ են տեղի ունենում: Ամենայն հավանականությամբ, տեսանելի ապագայում այս երկարատեւ հակամարտության պատմության մեջ նոր շրջադարձ կլինի»,- գրում է թերթը:

Թերթի փոխանցմամբ՝ ռուսական Telegram ալիքներից մեկը հոկտեմբերի 10-ին հայ-ադրբեյջանական հարաբերությունների կարգավորման, այսպես կոչված, վաշինգտոնյան փաստաթուղթ էր հրապարկել: Այն, շարունակում է պարբերականը, արեւմտյան միջնորդական առաքելության արդյունք էր, ու, ըստ տարբեր աղբյուրների, Բրյուսելում եւ Պրահայում տեղի ունեցած մի շարք բանակցություններից, ինչպես նաեւ Վաշինգտոնում երկու երկրների արտաքին գործերի նախարարների եւ անվտանգության խորհուրդների քարտուղարների հանդիպումից հետո փաստաթուղթն ընկալելի ու ընդունելի է եղել նաեւ Փաշինյանի ու Ալիեւի համար:

«Եթե Հայաստանի ներկայիս իշխանությունն ընդունի այս փաստաթուղթը (իսկ Հայաստանի կառավարության մեր աղբյուրները պնդում են, որ Փաշինյանը վստահ է, որ դա հնարավորինս արագ պետք է ստորագրել), ապա այն Անդրկովկասում տեկտոնական տեղաշարժի պատճառ կդառնա: Հայաստանը, որ հաշ-



տություն կնքի Ադրբեյջանի եւ Թուրքիայի հետ՝ կորցնելով Ղարաբաղն ու այդպիսով, իբր թե, ազատվելով Էլզիստեցիալ սպառնալիքներից, այլեւ ոչ Գյումրիում ռուսական բազայի, ոչ էլ Ղարաբաղում ռուս խաղաղապահների կարիքը չի ունենա: Ավելի քան պարզ է, որ դա է արեւմտյան «միջնորդների» իրական նպատակը: Փաշինյանը կգնա՝ նման քայլի: Հայաստանի եւ Ռուսաստանի փորձագիտական հանրության զգալի մասը կարծում է, որ առանց խղճի խայթի կստորագրի. մինչեւ իշխանության գալը նա իրեն որպես արեւմտամետ էր ներկայացնում, ավելին՝ ջատագովում Հայաստանը ԵՄ-ից դուրս բերելու հարցում: Արդյոք փաստաթղթի ստորագրումից հետո Հայաստանում ու Ղարաբաղում բողոքի ակցիաներ կսկսվեն. հավանաբար այո, քանի որ 2021 թվականի խորհրդարանական արտահերթ ընտրությունների ժամանակ Փաշինյանը վերընտրվեց արժանապա-

տիվ խաղաղության, Ղարաբաղը հայկական պահելու ու Ռուսաստանի Դաշնության հետ ռազմավարական դաշինքն էլ ավելի ամրապնդելու կարգախոսով: Հայ ընտրողը, որ թվում է՝ Փաշինյանի ձախողումների նկատմամբ անսահման համբերատար ու հանդուրժող է, նրան նման մանդատ չի տվել ու վարչապետին կարող է հիշեցնել անցած չորս տարիների ընթացքում տեղի ունեցած բոլոր դժբախտությունները»,- ավելացնում է КОМСОМОЛЬСКАЯ ПРАВДА-ն:

Ըստ թերթի՝ բացի այդ, հայերն, ըստ երեւույթին, չեն մոռացել նորագույն պատմության դասերն ու անշուշտ հասկանում են, որ Վաշինգտոնի «անկեղծ ու ազնիվ» խոսքի ներքո կարող են մեն-միայնակ մնալ անվտանգության չլուծված խնդիրների դեմ:

Հոդվածագիր՝ Ալեքսանդր Սերգեյև Թարգմանությունը՝ ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆԻ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԿՐԱՆԳԻՊԵՆ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանը եւ Ադրբեյջանի նախագահ Իլհամ Ալիևը կարող են հանդիպել Ռուսաստանում եւ եռակողմ բանակցություններ վարել Վլադիմիր Պուտինի մասնակցությամբ: Հանդիպման նախապատրաստման մասին ասել է Bezdomocmu-ի դիվանագիտական աղբյուրը:

Նրա խոսքով՝ աշխատանքը սկսվել է հոկտեմբերի 14-ին՝ Աստանայում Պուտինի հաշտարար ելույթից հետո, երբ քննարկվել են Հայաստանի եւ Ադրբեյջանի տարածքային վեճերը: Bezdomocmu-ի մեկ այլ աղբյուր նշել է, որ այդ բանակցությունները կարող են տեղի ունենալ հոկտեմբերի վերջին օրերին, որպես դրանց անցկացման հիմնական վայր դիտարկվում են

Մոսկվան եւ Սոչին: «Ամենայն հավանականությամբ, կընտրվի Սոչին»,- նշել է աղբյուրը:

ՉՊԵՏՔ Է ՄՈՌԱՆԱԼ

Ուկրաինայի պատերազմը չպետք է աշխարհին ստիպի մոռանալ այլ հակամարտությունները, որոնք տեղի են ունենում Հայաստանում, Սիրիայում, Իրաքում, Սոմալիում, Մերձավոր Արեւելքում. այս մասին հայտարարել է Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնը:

«Այսօր կան մարդիկ, որոնք վրա հարձակվում են, իսկ, մյուս կողմից, կան առաջնորդներ, որոնք որոշել են հարձակվել, ներխուժել եւ նվաստացնել: Չեզոք մնալը կնշանակի գիտակցել, որ ուժեղ

օրենքը դառնում է ընդհանուր օրենք»,- ասել է Մակրոնը:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԱՅՑ

Հոկտեմբերի 25-26-ը ՀՀ ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը պաշտոնական այցով կգտնվի Վատիկանում. տեղեկացնում են ՀՀ ԱԳՆ-ից:

Այցի շրջանակներում նախատեսված են նախարար Միրզոյանի հանդիպումները Սուրբ Վրոժի ու Մալթայի Ինքնիշխան Ուխտի բարձրաստիճան պաշտոնյաների հետ:

Սանտա Մարիա Մաջիորե պապական տաճարում Արարատ Միրզոյանը ներկա կգտնվի «Խաղաղություն՝ Հայաստանին» խորագրով պատարագին:

ԲԱՅԱՅԱՅՏՎԵԼ Է

ԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԲՆՈՒՅԹԻ ՇԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԴԵՊՐ

ՀՀ ԱԱԾ լրացական բաժնից ArmLur.am-ին հայտնեցին, որ ՀՀ ազգային անվանգոյության ծառայության սննեսական անվանգոյության եւ կոռուպցիայի հակազդման դեպարտամենտի աշխատակիցները, հետևողականորեն դրսևորելով համրային ծառայության սարքեր բնագավառներում կոռուպցիոն հանցագործությունների դեմ դայբարի գործելաոն, իրականացված օղերաշիվ-հետախուզական արդյունավետ միջացառումների արդյունքում բացահայտել են դաշնոնական լիագորությունները շարաւահելու, աղօրինի դաշական ալի կայացնելու դեղբեր, որոնց հիման վրա ՀՀ ազգային անվանգոյության ծառայության բննչական դեպարտամենտում նախաձեռնված ֆրեական վարույթով ձեռք է բերվել աղացույցների բավարար համակցություն առ այն, որ Երեւան ֆաղաբի բննհանուր իրավասության դաշարանի՝ օրենքով նախատեսված լիագորություններ իրականացնող ղեկական դաշնոնաւար անձը, տեղեկացված լինելով ՀՀ ֆննչական կոմիտեում ֆննվող ֆրեական վարույթով մեղադրյալ, իր եղբոր հետ մեկտեղ հարաբերությունների մեջ գնվող անձի նկատմամբ կալանքը որդես խափանման միջոց կիրառելու վերաբերյալ դաշարանի որոշման առկայության մասին, խմբային ւահերից ելնելով, դաշասականություն է հայտնել վերջինի օգտին կաշարել աղօրինի գործողություններ, այն է՝ ալնհայտ անարդար դաշական ալի կայացնելու միջոցով նրան ազատել կալանից:



արդարադատության իրականացման իշխանական բացառիկ լիագորությունները եւ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործել է ի վնաս պետական շահերի. այլընտրանքային խափանման միջոցի կիրառման անբավարար լինելու հանգամանքը մեկ այլ դատավորի որոշումներով հաստատված լինելու պայմաններում մեղադրյալի նկատմամբ կիրառել է քրեական վարույթի համար հավանական խոչընդոտներ առաջացնող այլընտրանքային խափանման միջոց գրավ եւ նրան ազատել կալանքից:

Նախաքննության ընթացքում փաստական եւ իրավական հիմնավորումներով պայմանավորված, իշխանական եւ ծառայողական լիագորություններն անցնելու, ակնհայտ անարդար դատական ակտ կայացնելու եւ դրանց հանցակցելու համար համապատասխան ընթացակարգերի

պահպանմամբ, մեղադրանքներ են ներկայացվել երեք անձի, եւ նրանց բոլորի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանավորումը:

Քրեական վարույթով նախաքննությունը շարունակվում է, ձեռնարկվում են վարույթային գործողություններ եւ օպերատիվ-հետախուզական միջոցառումներ դեպքի ամբողջական հանգամանքները բացահայտելու նպատակով:

Միեւնույն ժամանակ, ծառայությունը, հաշվի առնելով, որ քրեական վարույթի շրջանակում դատավորի նկատմամբ գործողությունները կատարվում են՝ առավելագույնս ապահովելով միևնույնատական քրեական վարույթի գաղտնիությունը, դատավորի հեղինակության ու անկախության նկատմամբ հարգանքը, քրեական վարույթի այս փուլում հավելյալ այլ տեղեկատվություն տրամադրել չի կարող:

Իր մտադրությունների իրականացման նպատակով պաշտոնատար անձը հանցավոր արարքի կատարմանը որպես հանցակիցներ ներգրավել է նաեւ դատական իշխանության ոլորտում իշխանական գործառույթներ իրականացնող մեկ այլ պաշտոնատար անձի, ինչպես նաեւ իր օգնակակին եւ ՅՅ փաստաբանների պալատի փաստաբանին, որոնք խորհուրդներ եւ տեղեկատվություն տրամադրելու, խոչընդոտները վերացնելու եղանակով օժանդակել են ենթադրյալ ծանր հանցագործության կատարմանը:

Արդյունքում դատական իշխանություն իրականացնող պետական մարմնի պաշտոնատար անձը, մեղադրյալի հետ անձնական բնույթի միջնորդավորված կապերի առկայությամբ պայմանավորված, իր՝

ԼՈՒՐԵՐ

ՏՂԱՄԱՐԴՈՒ ԴԻ



ArmLur.am-ի տեղեկությունների համաձայն՝ հոկտեմբերի 23-ին՝ ժ.15:50-ին, Սուխումիի փողոցում խառնաշփոթ իրավիճակ է եղել, եւ շենքի բնակիչները գանգախարել են շտապօգնություն, որից հետո՝ ոստիկանություն, եւ հայտնել, որ շենքի միտ մահացած մարդ կա:

Դեպքի վայր շտապած իրավապահները պարզել են, որ նշված շենքի հարեանությամբ գտնվող ավտոտնակում տղամարդու դի կա. մահացածը 42-ամյա Ե. Խեչիկյանն է, որը գլխի շրջանում ունի վնասվածք, իսկ դիակի կողքին ինքնաշեն ատրճանակի նմանվող առարկա կա:

Դեպքի առթիվ նյութեր են նախապատրաստվում ինքնասպանության հատկանիշներով, իսկ թե ինչու է տղամարդը գնացել այդ քայլին, առայժմ հայտնի չէ:

ԿԱԽՎԵԼ Է ՊԱՐԱՆՈՎ

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ երեկ առավոտյան՝ ժամը 10:00-ի սահմաններում, «Առաջին տուն ինտերնատ»-ում ուշագրավ դեպք է եղել: Յաղթանակ թաղամասի աշխատակցուհի Յ. Դեղոյանը գանգախարել է իրավապահներին եւ հայտնել, որ նշված ինտերնատում հայտնաբերել են 80 տարեկան Պ. Գաբրիելյանի դին՝ պարանոկ կախված վիճակում:

ՎԿԱՅԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿՈՒՄ

ArmLur.am-ին հասած տեղեկությունների համաձայն՝ ԱԱԾ-ն խուզարկություն է իրականացրել դատավոր Արուսակ Ալեքսանյանի աշխատանյակում, եւ որոշ փաստաթղթեր են առգրավվել: Մեզ հասած տեղեկությունների համաձայն՝ քրեական վարույթի շրջանակներում հարցաքննվել է դատավորի աշխատակիցներից մեկը վկայի կարգավիճակում:

Հիշեցնենք, որ օրերս կալանավորվեցին դատավոր Արուսայակ Ալեքսանյանը, փաստաբան Էրիկ Ալեքսանյանը եւ դատավորի օգնականներից մեկը: Ըստ լուրերի՝ վերջիններիս կալանավորումը պայմանավորված է այն հանգամանքով, որ դատավոր Արուսայակ Ալեքսանյանը քրեական հեղինակության մասով կայացրել է այնպիսի ակտ, որով նրան ազատ են արձակել 2,5 միլիոն գրավի դիմաց, ինչը իրավապահ համակարգում համարում են պաշտոնական լիագորությունների չարաշահում: Քրեական հեղինակության ազատ արձակման միջնորդությունն էլ ներկայացրած է եղել փաստաբան Էրիկ Ալեքսանյանը: Զ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԽԱՐԵՈՒԹՅՈՒՆ

Ո՞Վ Է ՉԵՐԲԱԿԱԿԱԿԱԾ ԱՆՉԸ

Օրերս ԱԱԾ-ի կողմից ձերբակալվել էր մեկ անձ, որն անհետ կորած զինծառայողի հարազատից խարդախությամբ խոշոր չափերով գումար էր հափճակել: Նկատելի, որ ձերբակալված անձը նախկին դաշնազար անձանցից մեկի որդու դեմ նախկինում ցուցմունք է սվել: Ո՞վ է նա:

Ըստ ԱԱԾ-ի՝ Գյումրի քաղաքի բնակիչ Բ. Պ.-ն, տեղեկանալով, որ համաքաղաքացի Խ. Գ.-ի ազգականը 2022 թվականի սեպտեմբերի 13-ին Աղբեջանի Յանրապետության զինված ուժերի կողմից իրականացված ռազմական գործողությունների հետեւանքով անհետ կորել է, նրանից խարդախությամբ խոշոր չափերով

գումար հափշտակելու եւ կաշառք տալուն դրդելու դիտավորությամբ, վերջինիս ներկայանալով որպես ԱԱԾ աշխատակից, բարձրաստիճան պաշտոնատար անձին՝ ԱԱԾ գեներալին կաշառք տալու դիմաց նշված զինծառայողին իբր գերությունից ազատելու եւ ՅՅ վերադարձնելու գործընթացը կազմակերպելու համար պահանջել է 5.000.000 ՅՅ դրամ գումար:

2022 թվականի հոկտեմբերի 11-ին ՅՅ ԱԱԾ աշխատակիցների հսկողության ներքո Խ. Գ.-ն պայմանավորված 5.000.000 ՅՅ դրամ գումարից 1.200.000 ՅՅ դրամը Գյումրի քաղաքում փոխանցել է Բ. Պ.-ին, որից անմիջապես հետո վերջինս բռնվել է ՅՅ ԱԱԾ աշխատակիցների կողմից եւ ներկայացվել վարույթի իրականացնող մարմնին:

Նկատենք, որ նախկին ոստիկան Բաբկեն Պողոսյանն անցնում է եւս մեկ աղմկահարույց գործով: ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ նա, ոչ ավել, ոչ պակաս, Գյումրու նախկին քաղաքապետ Վարդան Ղուկասյանի որդու՝ Սպարտակ Ղուկասյանի դեմ հարուցված քրեական գործով վկան է, որը ցուցմունք էր տվել Սպարտակ Ղուկասյանի դեմ եւ հիմա էլ հայտնվել է մեկ այլ աղմկահարույց պատմության մեջ: Այս իրավիճակում հարց է առաջանում, թե Պողոսյանի ցուցմունքը որքանով է արժանահավատ եւ իրական:

ՔՆՍՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

● Ըստ ոստիկանության տվյալների՝ հոկտեմբերի 21-ից 24-ը Յայաստանի Յանրապետությունում բացահայտվել է հանցագործության 112 դեպք, որոնցից 5-ը՝ նախկինում կատարված:

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԱՆՀԱՆԳՍՏԱՑԱԾ ԵՆ

Տավուշի մարզպետարանի ինտերնետային կայքը հայտնում է, որ հոկտեմբերի 31-ին նախատեսվում է Ֆրանսիայի Օ-դը-Սենի նահանգային խորհրդի նախագահ Ժորժ Սիֆրեդի գլխավորած պատվիրակության այցը Տավուշի մարզ, որի շրջանակներում էջեանում կբացվի Պատրիկ Դեյեյանի անվան գյուղատնտեսական քոլեջ: Կառավարությունը 2022 թվականի հուլիսի 14-ին ընդունել է N 1086 -Ա որոշումը՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության «Տավուշի տարածաշրջանային պետական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը «Տավուշի Պատրիկ Տեյեյան տարածաշրջանային քոլեջ» հիմնադրամի վերակազմավորելու մասին: Տավուշի տարածաշրջանային պետական քոլեջը հիմնադրվել է 1968թ.-ին՝ որպես Երեւանի թեթև արդյունաբերության տեխնիկումի մասնաճյուղ, այնուհետև՝ դարձել ինքնուրույն ուսումնական հաստատություն՝ էջեանի ինդուստրիալ-տեխնոլոգիական տեխնիկում: 2001թ.-ին էջեանի տեխնիկումը վերանվանվել է ակադեմիկոս Զորայր Ղազումյանի անվան էջեանի պետական քոլեջ: 2011թ.-ին քոլեջը դարձել է Տավուշի տարածաշրջանային ուսումնական կենտրոն: Տավուշի տարածաշրջանային պետական քոլեջի աշխատակիցներն այժմ անհանգստացած են, որ քոլեջը վերածվելու է հիմնադրամի: Նրանք ասում են, որ էջեանում 54 տարի գործող կրթօջայից հիմնադրամի վերածելու գործում բիզնես շահագրգռվածություն ունեն Տավուշի մարզի և Ֆրանսիայի Օ-դը-Սեն նահանգի միջև ապակենտրոն համագործակցության շրջանակում ստեղծված «ՀիմնաՏավուշ» հիմնադրամի՝ Լուսաճոր գյուղում գործող պանրագործարանում աշխատող ֆրանսիացի պանրագործերը: Սուրեն Գեորգյանը Ֆրանսիայի հայկական հիմնադրամի տնօրենն է, նա միաժամանակ «ՀիմնաՏավուշ» հիմնադրամի ղեկավարն է, նրա կին Հասմիկը Լուսաճորի պանրագործարանում արտադրվող պանիրը Ռուսաստանում իրացնող «ԷկոՏավուշ» տնօրենն է: Տավուշի տարածաշրջանային քոլեջի աշխատողները ասում են, որ իրենց կրթօջայում 54 տարում մի շարք մասնագիտությունների գծով ստեղծվել է նյութատեխնիկական հարուստ բազա, որը հիմնադրամի դեպքում դառնալու է անպետք, փոշիանալու է: Քոլեջը հիմնադրամի վերածվելու հետեանքով ոչ գյուղատնտեսական ուղղությամբ մասնագետները աշխատանքի գրկվելու են, դադարեցվելու է ժամանակակից մի շարք մասնագիտությունների, օրինակ՝ արեւային էներգետիկայի, զբոսաշրջության, գինեգործության և այլնի ուսուցումը: Քոլեջի աշխատողներն ասում են, որ այդ հիմնադրամը կարելի էր ստեղծել առանց քոլեջին դիպչելու, վնասելու: Գյուղատնտեսական քոլեջի հիմնադրամում սովորելու համար ուսանողների շահագրգռվածությունը բարձրացնելու նպատակով էջեանի քոլեջում ներկայումս գյուղատնտեսական թեքումով սովորող շուրջ 20 ուսանողի ձրի սնունդ են տալիս:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՅԱՆ
Տավուշ

ՔՆՆԱՐԿՎԵՑ

ՄԵՎԱՆԱ ԼՃԻ ՄԵՏԱՂԱԿԱՆ ՀԱՆՔԵՐԻ ԽՆԴԻՐԸ

ՀՀ զսմության հանրայնացման և հասարակայնության հե կադերի բաժնից ArmLur.am-ին հայցնեցին, որ սույն թվականի հոկտեմբերի 21-ին տեղի ունեցավ ՀՀ զսմությունների ազգային ակադեմիայի՝ Մեանա լճի փորձագիտական հանձնաժողովի նիստը, որին մասնակցում էին ՀՀ սարածային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության (ՏԿԵՆ) ընդերօգտագործման իրավունքի ձեռնարկման և կենսոնացված մասյանի վարման բաժնի ղեկավար Կարեն Գասպարյանը, ՀՀ Երջակա միջավայրի նախարարության (ՇՄՆ) «Երջակա միջավայրի վրա ազդեցության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի սնօրեն Խաչիկ Մարտիրոսյանը, նույն ՊՈԱԿ-ի գլխավոր փորձագետ Վարդան Հարությունյանը, ՀՀ ՇՄՆ հողերի և ընդերքի ֆաղաֆակայնության վարչության գլխավոր փորձագետ Կարեն Եղիսկոյանը, ՀՀ բնադահողայնության և ընդերքի տեսչական մարմնի ղեկավարի տեղակալ Սասուր Վարդանյանը և ՀՀ բնադահողայնության և ընդերքի տեսչական մարմնի ընդերքի վերահսկողության վարչության ղեկավար Գրիգորյանը: Բնադակվեց Մեանա լճի էկոհամակարգի վրա ոչ մեադակայն հանգրեի ազդեցության խնդիրը:



Նախարարության գրության համաձայն, Մեանա լճի ավազանում տրված է ոչ մետաղական հանքերի ընդերքօգտագործման 25 թույլտվություն, սակայն տիեզերական նկարներից երեւում է, որ միայն Գեղիովիտի բազալտի հանքի տարածքում առկա է 38 մեծ ու փոքր փորվածք 2019թ. դրությամբ, իսկ 2022թ.՝ ավելի շատ: «Ամբողջությամբ լանդշաֆտը վնասված է, անմիջապես Արգիճի գետի հարեանությամբ է, 200 մ է հեռու գետից: Զիլ-Արտանիշ հատվածում եւս մի քանի տանյակ բաց հանք կա», - ասաց Խաչատուր Մելիքսեթյանը:

Այնուհետև քննարկվեց Գեղարքունիքի մարզի Վարդաճոր համայնքում նախատեսվող բժշկական թափոնների այրման կայանքի հիմնման ՇՄՆ հաշվետվությունը: Հանձնաժողովի անդամները մտահոգություն հայտնեցին, որ կայանքը գտնվելու է «Մեան» ազգային պարկից 600 մ հեռավորության վրա, կայանքում նախատեսված թափոնների ծավալն ավելին է, քան կարող է արտադրվել Գեղարքունիքի մարզում, և հնարավոր է, որ այստեղ բերվեն այլ մարզերի բժշկական թափոններ: Այդ գործունեության համար նախատեսված տեխնոլոգիան լավագույններից է: Հանձնաժողովը հաշվետվության վերաբերյալ կարծիք կուղարկի Երջակա միջավայրի նախարարություն:

Հանձնաժողովի նախագահ Բարդուխ Գաբրիելյանը նշեց, որ Մեանի ավազանում, հատկապես՝ Մարտունու շրջանում, ոչ մետաղական հանքերը կարող են գումարային ազդեցություն ունենալ «Մեան» ազգային պարկի վրա, լուրջ վտանգ պարունակել լանդշաֆտի փոփոխման, գետերի վերին հոսանքներում կենսաբազմազանության վրա: «Մենք այդ հանքերի գումարային ազդեցության գնահատական չունենք: Գուցե առաջարկենք այս գործունեության ժամանակավոր կասեցում, մինչև ռազմավարական ՇՄՆ իրականացվի», - առաջարկեց Բարդուխ Գաբրիելյանը:

ՀՀ ՏԿԵՆ-ի ընդերքօգտագործման իրավունքի ձեռնարկման և կենտրոնացված մատյանի վարման բաժնի պետ Կարեն Գասպարյանը նշեց, որ Գեղիովիտի տարածքում տրված է մեկ ընդերքօգտագործման, երեք ուսումնասիրության թույլտվություն: ՀՀ ՇՄՆ-ի հողերի և ընդերքի քաղաքականության վարչության գլխավոր փորձագետ Կարեն Տպիսկոպոսյանը նշեց, որ նախարարությունը տեղյակ է, թե ինչքան հող է խախտվել, ինչ չափով: Որոշվեց, որպեսզի Մեանա լճի փորձագիտական հանձնաժողովը նամակով դիմի ՏԿԵՆ և ՇՄՆ, որպեսզի Մեանա լճի ավազանի համար իրականացվի ռազմավարական ՇՄՆ գնահատում պարզելու, թե ավազանում տնտեսական տարբեր գործունեության տեսակները գումարային ինչ ազդեցություն են ունենում Մեանա լճի վրա:

Քննարկվեց նաև Գեղարքունիքի մարզի Վարդաշեն համայնքի վարչական տարածքում ասֆալտեթոնե գործարանում ընդերքօգտագործման թափոնների և օգտագործված ասֆալտի վերամշակման աշխատանքների՝ Երջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը: Նշվեց, որ ասֆալտեթոնե գործարանը գործում է 2010թ-ից: Խաչատուր Մելիքսեթյանն առաջարկեց, որպեսզի սահմանվի պահանջ՝ կիրառելու այնպիսի տեխնոլոգիաներ, որոնք կնվազեցնեն արտանետումները՝ հաշվի առնելով, որ գործարանը Մեանա լճից 680 մ է հեռու: Հանձնաժողովը հայտի վերաբերյալ եւս կարծիք կներկայացնի ՇՄՆ:

ՆԱԽՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԳՐԵԹԵ 7 ԱՄԻՍ

ԱՎՏՈՋԱՆԱՊԱՐԿԸ ՉԻ ՆՈՐՈԳՎՈՒՄ

Երկու ամսից սարին կավարժվի, բայց կառավարությունը դեռ չի նորոգում դեռևս մարտին փրկված կամուրջը: Խոսքը էջմիածին-Մարգարա ավտոճանադարհի մասին, է որը մոտ 7 ամիս է, ինչ անանցանելի է:

Նարարության մրցույթի հայտը արդեն տրվել է: Առաջիկա օրերին պետք է որ շինարարության մրցույթը հայտարարվի»:

Զրույցի ընթացքում համայնքի ղեկավարն արձանագրեց, որ իրենց համայնքի մոտ պետք է ավագով բեռնված մեքենաների համար նախատեսված կշեռք տեղադրվի:

Կիիշեք՝ մի քանի գյուղեր կապող՝ Սեջուր գետի կամրջի վրա մեծ ճաքեր էին առաջացել, և այդ հատվածով երթեկությունը մինչև հիմա անհնար է, քանի որ կամուրջը փլուզման վտանգի առաջ է կանգնած. մի հատվածը ճաքած է: Այն շրջանցելու նպատակով տեղի բնակիչներն անիվներ են տեղադրել կամրջի վրա ու ժապավենով առանձնացրել երթուղիների հատվածից:

Ի դեպ, տեղեկացնենք, որ կամրջի նորոգումը հրատապության կարգով ներառվել է 2022թ. հիմնանորոգման ծրագրում, բայց, չգիտես, թե ինչու, կես տարուց ավելի է, ինչ կառավարությունը չի կարողանում մի կամուրջ նորոգել:

«Մեր գյուղի մոտ այդ կշեռքից չի տեղադրվել, «Զվարթնոցում» գազալցակայան կա, դրա կողքին է տեղադրվել: Երեւան գնացող բոլոր մեքենաները՝ տարբեր բեռներով բարձրված, պետք է կշռվեն: Ժամանակը գա, մեզ մոտ էլ կտեղադրվի, որովհետև վարորդները փորձում են այդ ճանապարհները շրջանցել:

Թե երբ են ի վերջո սկսվելու կամրջի նորոգման շինաշխատանքները հարցին ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունից փոխանցեցին հետևյալը. «Այդ կամրջի շինարարության մրցույթի հայտը արդեն տրվել է: Առաջիկա օրերին պետք է որ շինարարության մրցույթը հայտարարվի»:

ArmLur.am-ին դեռ ապրիլ ամսին Արմավիրի մարզպետարանից փոխանցել էին, որ կամրջի հիմնանորոգման նախագիծ է մշակվում, սակայն ամիսներ է անցել, բայց սայլը տեղից չի շարժվում: Տեղի բնակիչները վստահ են, որ կամրջի նորոգման աշխատանքները դանդաղում են: Թե ինչու է ձգձգվում կամրջի նորոգումը, Արաքս խոշորացված համայնքի ղեկավար Ղազար Ղազարյանը չկարողացավ ասել: Նա չգիտի նաև, թե երբ են սկսվելու շինաշխատանքները:

Մենք արդեն տեղեկացրել ենք համապատասխան մարմիններին, որովհետև մեր ճանապարհները ավագով բեռնված մեքենաները փչացնում են. անգամ նկատել ենք, թե ինչպես է ասֆալտը փոս գնացել մեքենայի անցնելուց հետո ու նորից բարձրացել», - իրավիճակը ներկայացրեց Ղազար Ղազարյանը:

ՄԱՐԿԸ ՀԱՍՔԱՐՉՈՒՄՅԱՆ

● Անցած 3 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 41 ՃՏՊ. 3 մարդ զոհվել է, 45-ը՝ ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ԿԱՐԾԻՔ

ՉԵՍՊԻՈՆ Է ԴԱՐՁԵԼ

«ՇԱՏ ԵՐԿԱՐ ԷՐ ՄՊԱՍԵԼ ԱՅՍ ՄԵՒԱԼԻՆ». Ա. ՀՈՎՍԵՓՅԱՆ

ՀՀ ԿԳՄՍՆ հասարակայնության հեռուստա- և ռադիոկայանների վարչությանից ArmLur.am-ին հայտնեցին, որ բռնցքամարտիկ Անի Հովսեփյանը եվրոպայի մեծահասակների չեմպիոն է դարձել:

«Շատ երկար եմ սպասել ոսկե մեդալին». բռնցքամարտիկ Անի Հովսեփյանը Եվրոպայի մեծահասակների չեմպիոն է դարձել: Բռնցքամարտի Հայաստանի կանանց հավաքականը 1 ոսկե և 2 բրոնզե մեդալ է նվաճել Չեմպիոնային Բուդվա քաղաքում անցկացված բռնցքամարտի Եվրոպայի մեծահասակների առաջնությունում:

Եվրոպայի չեմպիոնի կոչմանն արժանացել է Անի Հովսեփյանը: 70 կգ քաշայինների եզրափակչում հայ մարզուհին 4:1 հաշվով առավելության է հասել Իռլանդիայի ներկայացուցիչ Քրիստինա Դեսմոնդի նկատմամբ և արժանացել չեմպիոնի կոչմանը: Անի Հովսեփյանն առաջնության քառորդ եզրափակչում ավելի վաղ հաղթանակ էր տարել հունգարացի Ռեգինա Լակոսի նկատմամբ, իսկ կիսաեզրափակչում 5:0 հաշվով առավելության էր հասել Չեմպիոնային ներկայացուցիչ Թամարա Ռադունովիչի նկատմամբ:

Մեկնաբանելով չեմպիոնությունը՝ Անին նշել է, որ շատ երկար էր սպասել այս մեդալին. «Իռլանդացի բռնցքամարտիկը բավականին բարդ մրցակից էր, բայց ռինգում հաղթելու ու պայքարելու իմ ցանկությունն ավելի մեծ էր, որովհետև ես շատ երկար էի սպասել այս պահին ու այս մեդալին: Եվրոպայի առաջնությունն արդեն պատմություն է: Պետք է էլ ավելի լավ պատրաստվել ու գարգացնել այն հաջողությունը, որը ես ունեմ հիմա: Իմ ծրագրերն ու նպատակները կապված են Փարիզի՝ 2024 թվականի օլիմպիական խաղերի հետ: Հուսով եմ, որ կլինեմ օլիմպիական հավաքականում»:

Ի դեպ, Անի Հովսեփյանն առաջնության ընթացքում նաև ընտրվել է EUBC-ի (Սի-րոդական բռնցքամարտի եվրոպական



ֆեդերացիա) գործկոմի անդամ: Ընտրությունը կատարվել է բռնցքամարտիկների կողմից:

Գործկոմում են նաև մեկական կին եւ տղամարդ բռնցքամարտիկներ: Նրանք գործկոմում կբարձրացնեն բռնցքամարտիկներին վերաբերող հարցեր:

Հայաստանի կանանց հավաքականի կազմում բրոնզե մեդալներ էլ նվաճել են 54 կգ քաշային Եկատերինա Սիջեան եւ 63 կգ քաշային Սոնա Հարությունյանը՝ կանգնելով պատվո հարթակի երրորդ աստիճանին:

Նշենք՝ հայ բռնցքամարտիկները պատմության մեջ առաջին անգամ են մեդալներ նվաճում բռնցքամարտի Եվրոպայի կանանց մեծահասակների առաջնությունում:

Մարզիչ Ռաֆայել Մեհրաբյանի գլխավորությամբ Հայաստանի կանանց հավաքականը Եվրոպայի առաջնությանը մասնակցել է 7 մարզիկով: Թիմի կազմում ընդգրկված են եղել նաև Տաթևիկ Խաչատրյանը (57 կգ), Էլիզա Քոչարյանը (60 կգ), Գայանե Տեր-Բարսեղյանը (48 կգ) եւ Անուշ Գրիգորյանը (50 կգ), որոնք, սակայն, անմասն են մնացել մեդալներից:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողովի գումարման մասին հայտարարություն

2022 թվականի նոյեմբերի 10-ին գումարվելու է «ՅՈՒՆԻԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի արտահերթ ընդհանուր ժողով՝ համատեղ ներկայության կարգով, իրական ժամանակի ռեժիմում Zoom հավելվածի միջոցով:

«Յունիբանկ»-ը վերահսկվում է ՀՀ կենտրոնական բանկի կողմից:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Գայանե Անաստասի Սարգսյանի աճուրդի կազմակերպման եւ անցկացման մասին

2022թ. նոյեմբերի 21-ին՝ ժամը 11:30-ին, Գայանե Անաստասի Սարգսյանի սևակության գործով կառավարիչ Արմենակ Էլոյանի կողմից ք. Երեւան, Արշակունյաց 5, 311 սենյակ հասցեում կանցկացվի Գայանե Սարգսյանի պարտավորություններ համար «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-

ում գրավադրված, սեփականության իրավունքով Անաստաս Սարգսյանին պատկանող լոտ-1. ՀՀ, քաղաք Երեւան, Մալաթիա Ս.Օհանյանի փողոց, 12 շենք 26 հասցեում գտվող անշարժ գույքի աճուրդային վաճառքը:

Անշարժ գույքը գտնվում է 9 հարկանի շենքի 9-րդ հարկում, բնակարանի մակերեսը 55.6 քմ է, առաստաղի բարձրությունը՝ 2.8 մետր, պատուհանները մետաղապլաստ են, հատակը՝ մանրատախտակ, ունի ջրամատակարարում, գազամատակարարում, էլեկտրամատակարարում: Աճուրդի մեկնարկային գինը սահմանվում է 13 640 319 ՀՀ դրամ:

Աճուրդին մասնակցելու համար պետք է ներկայացվեն աճուրդի մասնակցության վճարի եւ նախավճարի վճարումը հաստատող փաստաթղթեր՝ ֆիզիկական անձի դեպքում՝ անձնագրի պատճենը, իսկ իրավաբանական անձի եւ Ա/Ձ-ի դեպքում՝ պետական գրանցումը հավաստող փաստաթղթերի պատճենը, աճուրդի մասնակցության վճարի եւ նախավճարի վճարումը հաստատող փաստաթղթեր:

Մասնակցության վճարը կազմում է 150 044 ՀՀ դրամ: Նախավճարը կազմում է տվյալ լոտի մեկնարկային գնի 5%-ը:

Աճուրդի մասնակցության վճարը եւ նախավճարը վճարվում են Գայանե Սարգսյանի սևակության հատուկ հաշվին՝ «Արդշիրան» ՓԲԸ-ի «Էրեբունի» մասնաճյուղի 2472302882650130 հաշվեհամարին, մինչեւ հայտ ներկայացնելու պահը:

Աճուրդին մասնակցել ցանկացողները սույն հայտարարությունից հետո՝ ընդհուպ մինչեւ աճուրդին նախորդող օրվա ժամը 16:00-ն, կարող են հայտ ներկայացնել Սևակության դատարանի շենքում /ք. Երեւան, Օտյան 53/2/:

Աճուրդում հաղթող է համարվում առավել բարձր գին առաջարկած մասնակիցը: Ցանկացողները կարող են լուրը ուսումնասիրել, ինչպես նաև աճուրդի կանոնակարգին ծանոթանալ՝ դիմելով կառավարիչ Արմենակ Էլոյանին /հեռ.094 411 487/:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Կորել է Հակոբ Մեսրոպյանի՝ ՊԵԿ-ի կողմից տրամադրված աշխատանքային ծառայողական վկայականը: Քաղաքացին գտնողին խոստանում է դրամական պարգև: Հեռ.՝ 093420707:

ԼՈՒՐԵՐ

ԿՐԿՆԱԿԻ ՀԱՂԹՈՂ

Իսպանիայի Պոնտեվեդրա քաղաքում ընթացող Մ23 տարեկանների աշխարհի առաջնությունում ազատ ոճի ըմբիշ, 61 կգ քաշային Արսեն Հարությունյանը ոսկե մեդալ է նվաճել՝ եզրափակչում 7:5 հաշվով առավելության հասնելով Դրոգստանի ներկայացուցիչ Թայիրբեկ Ժումաբեկի նկատմամբ:

ԿԳՄՍ նախարարության տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի վարչությունից հայտնում են, որ Հարությունյանը պայքարը սկսել էր որակավորման փուլից, որտեղ 10:0 հաշվով հաղթել էր Եգիպտոսի ներկայացուցչին, 1/8 եզրափակչում հայ ըմբիշը 11:0 հաշվով փայլուն հաղթանակ էր տարել Պուերտո Ռիկայի ներկայացուցիչ Ժոզեֆ Անդրես Սիլվայի նկատմամբ, քառորդ եզրափակչում 9:3 հաշվով առավելության էր հասել դազախ Ասիլ Այտակինի նկատմամբ, իսկ կիսաեզրափակչում 13:4 հաշվով հաղթել էր Վրաստանի ներկայացուցիչ Ռամազ Տուրմանիձեին:

Արսեն Հարությունյանը երկրորդ անգամ է հռչակվում աշխարհի մինչեւ 23 տարեկանների չեմպիոն: Նախորդ անգամ Արսենն այս տիտղոսին արժանացել էր 2021 թվականին Բելգրադում անցկացված առաջնությունում:

Հայաստանի մյուս ներկայացուցիչ, 74 կգ քաշային Հրայր Ալիխանյանն էլ մոտ էր Մ23 տարեկանների աշխարհի առաջնության բրոնզե մեդալը նվաճելուն, սակայն վճռորոշ գոտեմարտում 5:7 հաշվով զիջել է մոլդովացի Վասիլ Դիակոնին:

Հիշեցնենք՝ Հայաստանի ազատ ոճի ըմբշամարտի հավաքականի կազմում ավելի վաղ ոսկե մեդալ էր նվաճել Վագեն Թեւանյանը (57 կգ), իսկ Արման Ավագյանը (79 կգ) դարձել էր բրոնզե մեդալակիր:

ԿՐԿՆԱԿԻ ՀԱՂԹՅՈՒՆ

DC Comics-ի «Սեւ Ադամ» ֆիլմը, որի գլխավոր դերակատարը Դուեյն Ջոնսոնն է, համաշխարհային վարձույթում առաջին հանգստյան օրերին վաստակել է 140 միլիոն դոլար: Դրանցից 67 միլիոն դոլարը ստացվել է Հյուսիսային Ամերիկայի տարածաշրջանից, որտեղ ժապավենը գրավել է բոքս օֆիսի առաջին հորիզոնականը:

Ըստ Variety-ի՝ այս մեկնարկը համեմատելի է 2018թ.-ի «Աքվամեն»-ի հաջողության հետ, որն առաջին «ուլթենդին» հավաքեց 67,8 միլիոն դոլար, սակայն «Սեւ Ադամ»-ը նկատելիորեն զիջում է «Վենոմ» կոմիքսների հակահերոսի մասին ֆիլմին, որն իր պրեմիերայի հանգստյան օրերին վաստակել է 80 միլիոն դոլար:

«Սեւ Ադամ»-ը նույնպես վատ մեկնաբանություններ է ստացել քննադատներից: Rotten Tomatoes-ում ժապավենի ընդհանուր վարկանիշը 100 հնարավորից 58% է: Լավագույն կինոքննադատների շրջանում «թարմության» վարկանիշն էլ ավելի ցածր է՝ 28%:

● Հոկտեմբերի 28-ին թատրոն «Կայարան»-ում տեղի կունենա «Անահիտ» մանկապատանեկան ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 1500-2000 դրամ: Սկիզբը՝ ժամը 16:00-ին:



Էջը՝ ՌՈՋԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ե՞րբ է մեղադրվողը կամ կասկածյալը համարվում անմեղ:

Գեորգ Սիրեկանյան (54 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Հանցագործության համար կասկածվողը կամ մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ սույն օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով: Կասկածյալը կամ մեղադրյալը պարտավոր չէ ապացուցել իր անմեղությունը: Նրանց անմեղության ապացուցման պարտականությունը չի կարող դրվել պաշտպանության կողմի վրա: Մեղադրանքի ապացուցման եւ կասկածյալին կամ մեղադրյալին ի պաշտպանություն բերված փաստարկների հերքման պարտականությունը կրում է մեղադրանքի կողմը:

Հանցանք գործելու մեջ անձի մեղավորության մասին հետետությունը չի կարող հիմնվել ենթադրությունների վրա, այն պետք է հաստատվի գործին վերաբերող փոխկապակցված հավաստի ապացույցների բավարար ամբողջությամբ: Մեղադրանքն ապացուցված լինելու վերաբերյալ բոլոր կասկածները, որոնք չեն կարող փարատվել սույն օրենսգրքի դրույթներին համապատասխան պատշաճ իրավական ընթացակարգի շրջանակներում, մեկնաբանվում են հօգուտ մեղադրյալի կամ կասկածյալի:

ՀՀ քննչական կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԳ». Կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ կիրառվող խափանման միջոցները չեն կարող պարունակել պատժի տարրեր:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ամուսնության մեջ չզգնվող ծնողներից երեխայի ծնվելու դեպքում ի՞նչ կարգով է որոշվում հայրությունը:

Յրաչուհի Կիրակոսյան (28 տարեկան)



ՊԱՏԱՍԽԱՆ. Ամուսնության մեջ չգտնվող ծնողներից երեխա ծնվելու դեպքում, եթե բացակայում է ծնողների համատեղ դիմումը կամ երեխայի հոր դիմումը, ապա որոշակի անձից երեխայի սերված լինելու փաստը (հայրությունը) որոշվում է դատական կարգով՝ համապատասխանաբար ծնողներից մեկի կամ մոր, երեխայի խնամակալի (հոգաբարձուի) կամ այն անձի դիմումի հիման վրա, որի խնամքին է գտնվում երեխան, իսկ երեխայի չափահաս դառնալուց հետո՝ վերջինիս ներկայացրած դիմումի հիման վրա: Այս դեպքում դատարանը հաշվի է առնում ցանկացած ապացույց, որը ստույգ հաստատում է, որ տվյալ երեխան սերվել է որոշակի այդ անձից:

ՀՀ քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալություն

«ԺՈՂՈՎՈՒՐԳ». Իրեն երեխայի հայր ճանաչած, բայց երեխայի մոր հետ ամուսնության մեջ չգտնվող անձի մահվան դեպքում վերջինիս որպես երեխայի հայր ճանաչելու (հայրության) փաստը կարող է հաստատվել դատական կարգով՝ քաղաքացիական դատավարության օրենսդրությամբ սահմանված նորմերով:

ԼՈՒՐ ԿԱՐԴ

Լուսանկարն արվել է Երեւանում



Գայի պողոտայում «Էլլա» գիշերային ակումբի մոտ, բախվել են Երեւանի բնակիչներ 41-ամյա Էդգար Գալստյանի վարած Mercedes G500 մակնիշի եւ 24-ամյա Միքայել Սարգսյանի վարած Lada Priora մակնիշի ավտոմեքենաները: Վթարի հետեւանքով կա մեկ վիրավոր:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը
Բաժանորդագրվելու
համար կարող եք դիմել



«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (010 54-64-23 հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադարձանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից


«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

✕

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝ (060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.



*«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը.
«Շարունակությունը կարող էք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*

Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22՝/3, հեռ՝ 010 54-64-23
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության 24.10.2022

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆՂ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: